ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/56

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն

Մասնակից՝ «Դերձակ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Դերձակ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ն. Սարգսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՄԵՏՐՈ/ՀԱԳՈՒՍՏ-55», «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56» և «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-57» ծածկագրերով գնանշման հարցում, Հանդերձանքի ձեռքբերում:

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՄԵՏՐՈ/ՀԱԳՈՒՍՏ-55/2», «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56/2» և «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-57/2»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների

նախարարության կողմից 21.02.2020թ.-ի թիվ 26/26-1/2532-2020, 26/26-1/2542-2020 և 26/26-1/2547-2020 գրություններով «Դերձակ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության 18.02.2020թ. թիվ 3/27/5317-20, 3/27/5374-20 և 3/27/5375-20 նույնաբովանդակ գրությունների հիման վրա, 21.02.2020թ.-ին «Դերձակ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 21.02.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/56 համարի ծածկագիրը և 24.02.2020թ.-ին հրապարակվել www.gnumner.am կայքում:

02.03.2020թ.-ին և 23.03.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 02.03.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 23.03.2020թ.-ին:

2. ՀՀ ոստիկանության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ ոստիկանությունը 18.02.2020թ. թիվ 3/27/5317-20, 3/27/5374-20 և 3/27/5375-20 նույնաբովանդակ գրություններով դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով, որ «Դերձակ» ՍՊԸ-ն թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՄԵՏՐՈ/ՀԱԳՈՒՍՏ-55/2», «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56/2», «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-57/2» պայմանագրերի շրջանակներում ստանձնած պարտավորությունները կատարել է ոչ պատշաճ՝ մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի

պահանջները, կից ներկայացրել են «Դերձակ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուի ներկայացուցիչը ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

3. <u>«Դերձակ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 25.02.2020թ.-ի գրությամբ դիմել է «Դերձակ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.02.2020թ.-ի թիվ 26/26-1/2532-2020, 26/26-1/2542-2020 և 26/26-1/2547-2020 գրություններով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«ՀՀ Ֆինանսների նախարարությունը 18.02.2020թ. թիվ 26-1/2217-2020, 26/26-1/2214-2020,26/26- 1/2274, 26/26-1/2283-2020, ինչպես նաև 21.02.2020թ. թիվ 26/26-1/2532-2020, 26/26-1/2542-2020, 26/26-1/2547-2020 գրություններով նախաձեռնել է ընթացակարգ «Դերձակ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, նշված գրություններին կից Ձեզ ուղարկելով համապատասխան հիմքեր: Ընթացակարգի նախաձեռնողը հանդիսանում է ՀՀ Ոստիկանությունը:

Ուսումնասիրելով ՀՀ Ոստիկանությունից ՀՀ Ֆինանսների նախարարություն ներկայացված «հիմնավորումները» գտնում ենք, որ դրանք թերի են և հիմնազուրկ հետևյալ պատճառաբանություններով՝

Նախ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն <<պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցվում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները>>:

ՀՀ Ոստիկանության և «Դերձակ» ՍՊԸ-ի միջև 24.06.2019թ. կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՊՊԳՎ/ՀԱԳՈԻՍՏ-53/2» ծածկագրով, 17.06.2019թ. կնքված «ՀՀ Ո

ԳՀԱՊՁԲ-2019-ՄԵՏՐՈ/ՀԱԳՈՒՍՏ-55/2» ծածկագրով, 24.06.2019թ. կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019- ՃՈ/ՀԱԴԵՐՁԱՆՔ-56/2>> ծածկագրով, 28.06.2019թ. կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱԴԵՐՁԱՆՔ-57/2>> ծածկագրով հանդերձանքի գնման պայմանագրերում նշված պայմանների չկատարման հարցում ի սպառ բացակայում է «Դերձակ» ՍՊԸ-ի մեղքը, քանի որ ՍՊԸ-ն ձեռնարկել է հնարավոր բոլոր միջոցառումները պայմանագրային պարտավոյությունները ժամանակին և պատշաճ որակով կատարելու համար: Պայմանագրի զգալի մասի պարտավորությունները ՍՊԸ-ն կատարել է ժամանակացույցով սահմանված ժամկետում, իսկ մյուս մասը, որը ի նկատի է ունեցվել ՀՀ Ոստիկանության տնտեսական վարչության պետի Ձեզ ուղղված գրությունների մեջ, չի մատակարարվել ոչ թե մեր, այլ ՀՀ Ոստիկանության համապատասխան ծառայությունների մեղքով: ՀՀ Ոստիկանությունը գնանշման հարցման ժամկետ է սահմանել 2019թ. մայիսի 14-ը, այսինքն՝ տնտեսական տարվա մոտավորապես կեսին: Անգործության ժամկետ է սահմանվել 5 օրացույցային օր: ՀՀ Ոստիկանությունը անտեսելով անգործության ժամկետը, վերը նշված բոլոր պայմանագրերը կնքել է 2019թ. հունիսի 17-ից հունիսի 28-ը ընկած ժամանակամիջոցում, այն դեպքում, երբ մենք բազմիցս խնդրել ենք արագացնել պայմանագրերի կնքումը, պատճառաբանելով, որ պայմանագրերում նշված հանդերձանքի և հագուստեղենի հումք-գործվածքեղենը պատրաստի գոյություն չունի այն պետք է պատվիրվի և ձեռք բերվի արտասահմանից: Նախորդ տարիների փորձից գիտեինք, որ գործվածքեղենի պատվերի կատարումը տևում է մոտ 90 օր, իսկ Հայաստան առաքումը ևս 30 օր: Այդ պատճառով հիշատակված բոլոր պայմանագրերի հետ կապված մենք 15.07.2019թ. գրությամբ հայտնել ենք ՀՀ Ոստիկանության պետի տեղակալ Վ.Մովսիսյանին, խնդրելով մատակարարումների ժամկետները երկարաձգել 30 օրացույցային օրով: Մեր խնդրանքը բավարարվել է մատակարարումների ժամկետները երկարացվել է 30 օրացույցային օրով: Պայմանագրերի կնքման առաջին իսկ օրերից «Դերձակ» ՍՊԸ-ն ձեռնամուխ է եղել պայմանագրի պայմանների կատարմանը: Պայմանագրերով նախատեսված հանդերձանքի ն հագուստեղենի կարման գործվածքեղենը արտադրվում է Բելոռուսի Մինսկ քաղաքի «Կամվոլ» ՓԲԸ-ում: Նշված ՓԲԸ-ի հետ պայմանագիր կնքելը ժամանակատար պրոցես է, որը բացասաբար կանդրադառնար պայմանագրերի ժամկետների պահպանմանը, ուստի խնդրեցինք մեր ՍՊԸ-ի հետ միևնույն մասնաշենքում գործող «Պահապան» ՍՊԸ-ի տնօրինությանը այդ հարցում օգնելու մեզ: Բանն այն է, որ «Պահապան» ՍՊԸ-ն դեռևս 2014թ.-ից պայմանագրային հարաբերությունների մեջ է «Կամվոլ» ՓԲԸ-ի հետ: «Պահապան» ՍՊԸ-ն

ևս հագուստի ու հանդերձանքի մատակարարման պայմանագրեր ուներ ՀՀ Ոստիկանության հետ, որոնց կարման համար անհրաժեշտ էր ճիշտ նույն սպեցիֆիկայի գործվածքեղեն, ինչ որ հարկավոր էր մեզ, ուստի «Պահապան» ՍՊԸ-ի տնօրենին խնդրեցինք «Կամվոլ» ՓԲԸ-ին պատվիրել կրկնակի քանակությամբ գործվածքեղեն, այն Հայաստան ներկրվելուց հետո «Պահապան» ՍՊԸ-ից գնելու պայմանով: Հունիս ամսվա վերջերին «Պահապան» ՍՊԸ-ն 4000 գծամետր գործվածքեղենի պատվեր է տվել «Կամվոլ» ՓԲԸ-ին: Պատվիրված խմբաքանակը Հայաստան է ներկրվել դեկտեմբեր ամսվա կեսերին: Մենք «Պահապան» ՍՊԸ-ից գնել ենք 2000 գծամետր գործվածքեղեն և անմիջապես ձեռնմուխ եղել հանդերձանքի ու հագուստեղենի կարմանը, որի մասին գրավոր հայտնել ենք ՀՀ Ոստիկանության պետի տեղակալին, խնդրելով, որ արտադրանքի մատակարարումը կատարվի 2020թ-ի հունվար ամսին: Այդ գրությանը որևէ պատասխան չենք ստացել: Միայն 30.01.2020թ. ստացել ենք ՀՀ Ոստիկանության տնտեսական վարչության պետ Ա.Ներսիսյանի գրությունը այն մասին, որ մատակարարման ժամկետները 15 օրից ավել խախտված լինելու պատճառով, իրենք միակողմանի մասնակի լուծում են պայմանագիրը: Այդ ժամանակ պատրաստ էր պայմանագրում նշված բոլոր համազգեստների և հանդերձանքների խմբաքանակը, սակայն մենք այդ հագուստեղենը ոստիկանությանը չենք մատակարարել, քանի որ մեր գործընկերները պատճառաբանում էին, որ ավարվել է ֆինանսական տարին և վճարում չեն կարող կատարել: Հարկ է նշել,որ Ա.Ներսիսյանի նշված գրության օրը՝ հունվարի 30-ին դեռևս խախտված չի եղել մատակարարման ժամկետները, քանի որ, հաշվի առնելով, որ բոլոր պայմանագրերի հետ կապված կնքվել են նաև համաձայնագրեր, մատակարարման վերջնաժամկետը եղել է փետրվարի 4-ը:

Վերը շարադրվածը հիմանվորող փատաթղթեր առկա են ինչպես մեր ՍՊԸ-ում, այպես էլ «Պահապան» ՍՊԸ-ում, որոնք Ձեր պահանջի դեպում կներկայացվեն Ձեզ:

Մի նկատառում ևս ինչպես պարզվեց gnumner.am կայքում զետեղված հայտարարությունների ուսումնասիրմամբ, ՀՀ ոստիկանության պատվերով ՀՀ Ֆինանսների նախարարությունը ընթացակարգ է նախաձեռնել նաև ոստիկանությանը հանդերձանք մատակարարելու համար նրա հետ պայմանգրեր կնքած բոլոր կազմակերպություններին՝ «Պահապան», «Մասիսի Գարուն Ֆաբրիկա», «Աբի» ՍՊԸ-ների նկատմամբ, նրանց գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով: Հարց է առաջանում, թե ինչ պատճառով է ոստիկանության հետ հանդերձանքի մատակարարման պայմանագրեր կնքած բոլոր

կազմակերպությունները հանդիսանում պայմանագրային պարտավորությունները չկատարած, հետևապես գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու ենթակա: Պատասխանը առավել քան պարզ է՝ դա ոստիկանության համապատասխան ծառայությունների թերացումների արդյունքն է կապված գնումների մրցույթային գործարքների կազմակերպման և պայմանագրերի կնքման ուշացումների հետ, որը ի վերջո անհնարին է դարձնում արտադրողների կողմից պայմանագրային պարաավորությունների կատարումը:»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է կարճել նախաձեռնված գործընթացները և «Դերձակ» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2020/56 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ ոստիկանության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Դերձակ» ՍՊԸ-ի միջև 17.06.2019թ.-ին, 25.06.2019թ.-ին և 28.06.2019թ.-ին կնքվել են համապատասխանաբար թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՄԵՏՐՈ/ՀԱԳՈՒՍՏ-55/2», «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56/2» և «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-57/2» ծածկագրով պետական գնման պայմանագրեր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է մատակարարման ենթակա ապրանքի ժամկետները:

www.gnumner.am համացանցային կայքում 30.01.2020թ.-ին հրապարակված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՄԵՏՐՈ/ՀԱԳՈՒՍՏ-55/2» պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 27/73 ծանուցման համաձայն՝ ՀՀ ոստիկանության և «Դերձակ» ՍՊԸ-ի միջև 17.06.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՄԵՏՐՈ/ՀԱԳՈՒՍՏ-55/2» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ ոստիկանության կողմից 30.01.2020թ. միակողմանի մասնակի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի ուժով (մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավել):

www.gnumner.am համացանցային կայքում 30.01.2020թ.-ին հրապարակված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56/2» պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 27/72 ծանուցման համաձայն՝ ՀՀ ոստիկանության և «Դերձակ» ՍՊԸ-ի միջև 25.06.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56/2» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ ոստիկանության կողմից 30.01.2020թ. միակողմանի մասնակի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի ուժով (մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավել):

www.gnumner.am համացանցային կայքում 30.01.2020թ.-ին հրապարակված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-57/2» պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 27/74 ծանուցման համաձայն՝ ՀՀ ոստիկանության և «Դերձակ» ՍՊԸ-ի միջև 28.06.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-57/2 ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ ոստիկանության կողմից 30.01.2020թ. միակողմանի մասնակի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի ուժով (մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավել):

ՀՀ ոստիկանությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 18.02.2020թ.-ի թիվ 3/27/5317-20, 3/27/5374-20 և 3/27/5375-20 գրություններով:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.02.2020թ. թիվ 26/26-1/2532-2020, 26/26-1/2542-2020 և 26/26-1/2547-2020 գրություններով «Դերձակ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի

լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

www.gnumner.am համացանցային կայքում 30.01.2020թ.-ին հրապարակված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՄԵՏՐՈ/ՀԱԳՈՒՍՏ-55/2» պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 27/73 ծանուցման համաձայն՝ ՀՀ ոստիկանության և «Դերձակ» ՍՊԸ-ի միջև 17.06.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՄԵՏՐՈ/ՀԱԳՈՒՍՏ-55/2» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ ոստիկանության կողմից 30.01.2020թ. միակողմանի մասնակի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի ուժով (մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավել):

www.gnumner.am համացանցային կայքում 30.01.2020թ.-ին հրապարակված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56/2» պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 27/72 ծանուցման համաձայն՝ ՀՀ ոստիկանության և «Դերձակ» ՍՊԸ-ի միջև 25.06.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56/2» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ ոստիկանության կողմից 30.01.2020թ. միակողմանի մասնակի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի ուժով (մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավել):

www.gnumner.am համացանցային կայքում 30.01.2020թ.-ին հրապարակված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-57/2» պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 27/74 ծանուցման համաձայն՝ ՀՀ ոստիկանության և «Դերձակ» ՍՊԸ-ի միջև 28.06.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-57/2 ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ ոստիկանության կողմից 30.01.2020թ. միակողմանի մասնակի

լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի ուժով (մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավել):

ՀՀ ոստիկանությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 18.02.2020թ.-ի թիվ 3/27/5317-20, 3/27/5374-20 և 3/27/5375-20 գրություններով:

Սույն գործի փաստերի համաձայն, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 30.01.2020թ.-ին՝ հիմք ընդունելով թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՄԵՏՐՈ/ՀԱԳՈՒՍՏ-55/2» պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 27/73, թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56/2» պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 27/72 և թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-57/2» պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 27/74 ծանուցումները www.gnumner.am համացանցային կայքում 30.01.2020թ.-ին հրապարակելու հանգամանքը, սակայն Պատվիրատուն Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ 18.02.2020թ.-ին՝ հինգ աշխատանքային օրվա խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.02.2020թ. թիվ 26/26-1/2532-2020, 26/26-1/2542-2020 և 26/26-1/2547-2020 գրություններով «Դերձակ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/56 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ